

ՄԵԼԳՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սույն տարվա հուլիսի 29-ից օգոստոսի 18 օրերին Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության մի խումբ երկսեռ ուսանողներ, առաջին անգամ լինելով, բախտ ունեցան Ս. Էջմիածին և մայր հայրենիք ուխտի գալու: Նրանք իջևանեցին Բյուրականի «Հայկաշեն» հայրապետական ամառանոցում:

Հաստատության ընդհանուր դաստիարակ պրն. Սեպուհ Աբգարյանի ղեկավարությամբ ուսանողները շրջագայեցին Հայաստանի վանական տեսարժան վայրերում և ծանոթացան հայ ժողովրդի մշակույթի հուշարձաններին:

Օգոստոսի 14-ին, կիրակի օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը Վեհարանում բարեհաճեց ընդունել վարժարանի սան-սանուհիներին: Այս առթիվ Մելգոնյանցիները պատրաստել էին գեղարվեստական մի փոքր ծրագիր: Ուսանողների կողմից արտասանվեցին բանաստեղծություններ, որոնց հեղինակները հաստատության ավարտական դասարանի սանուհիներն էին:

Ստորև ներկայացնում ենք դրանցից երկուսը.

ՄԵՆԱՎՈՐ ՆՍՏԱՐԱՆ

Կիրակի կեսօր, տխուր եմ այսօր, չեմ գիտեր ինչո՞ւ,
Նստած եմ մինակ աղջկանց շենքի անտառակին մեջ,
Խաղաղ է շուրջս, կանաչ է շուրջս և ամեն հնչյուն
Կլեցնե սիրով, անուշ կարոտով հոգին իմ անշեջ:

Քանի՞-քանինե՞ր այս նստարանին ինձի պես մինակ,
Նստեր են տխուր ու երազեր են հեռո՞ւ-հեռունե՞ր...
Եվ այժմ չկան, հեռու են արդեն ու արդյոք հիմա
Չէի՞ն փափաքեր նստարանը այս կրկին վայելել...

Գիտեմ, որ սիրտս հեռուն տենչացող օր մը պիտ. ուզե
Հրաշք թևերով այս նստարանին դառնալ կարոտով.
Ուրեմն հիմա շշուկն անտառի թող հոգիս հուզե,
Սի՛րտ իմ, դուն լռե՛, լսե՛ ծառերուն սոսափը թոթով...

ՄԱՐԱԼ ՉՈԼԱՔՅԱՆ

Մելգոնյան կրթական հաստատության երկրորդ ուսանողների խումբը «Հայկաշեն» հայրապետական ամառանոցում, հնադարյան խաչքարի շուրջը

ԵՐԴՈՒՄ

Ապրիլ 24 ... Տոն նահատակաց.
Արդար ցասումով լեցուն են սիրտեր,
Վառվող ջահեր են աչքերը մեր թաց,
Հանգիստ չեն գտած մեր կոհերը դեռ...

Մեր անմեղ կոհե՛ր, մենք որբ չենք երբե՛ք,
Վկա՝ շողշողուն Հայրենիքը մեր,
Լի ենք ավյունով, ոչ թե՝ հուսաբեկ,
Մենք ունինք վաղվան շենշող երազներ...

Եվ այս սուրբ տոնին, իմ վեհ եղբայրներ,
Պետք չեն այլևս ողբ, կսկիծ ու լաց,
Եկեք խոստանանք ըլլալ լա՛վ հայեր,
Ու բազմապատկել փառքը Հայրենյաց:

ՍՈՍԻԿ ԳԱՏՅԱՆ

Ապա հաստատության տնօրենուհի Տիկին Սոսի Պետիկյանը Վեհափառ Հայրապետին հակիրճ տեղեկություններ տվեց Մելգոնյան վարժարանի ուսումնական կյանքի մասին՝ նշելով, թե քանի՛ ուսանողներ են սովորում կրթական այդ հաստատության հարկի տակ, ո՛ր երկրներից են ժամանած, և ներկայումս շրջանավարտ նախկին սաներից քանի՛ հոգի իրենց բարձրագույն մասնագիտական ուսումն ստանում են մայր հայրենիքում և տարբեր երկրներում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը իր խոսքն ուղղելով երիտասարդ-երիտասարդուհիներին, որոնք ներկայացնում էին հաստատության տարբեր դասարանները, նրանց հաջողություններ ցանկացավ ուսման մեջ՝ մաղթելով, որ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպի հերոսի և նրա որդու նման իրենք էլ վերածնվեն հայրենի հողում:

Վերջում ուսանողների անունից ավարտական դասարանի աշակերտ Արմեն Հասրությունյանը կարդաց հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տեր, արդեն անցած են Հայաստան մեր կեցության 18 օրերը ակնթարթի մը պես: Այդ տասնութ օրերը եղան հույսման, հաճույքի, ներշնչման ու հոգեկան ապրումի օրեր բոլորիս համար: Ծանոթացանք մեր հայրենիքի տեսարժան վայրերուն, պատ-

մական կոթողներուն, հնամյա տաճարներուն և անոնց կից գտնվող դպրոցներուն, որոնք դարեր շարունակ ծառայած են հայ դպրության և հանդիսացած են հայ մատենագրության ու գիտության վառ օջախներ: Եղանք կանական թանգարաններ, ինչպես նաև Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, ուր ի պահ դրված մշակույթի կանական գանձերը կվկայեն մեր տաղանդավոր նախնյաց մտավոր և հոգեկան հարստության մասին: Այցելեցինք ձեռակերտ, հրաշալի մեր վանքերը, որոնք շինված են մեր ժողովուրդի կավակներուն անձնակոհ մասնակցությամբ և որոնք իրենց հայեցի ոճով .ու մանրակուի նուրբ քանդակներով ու խաչքարերով կմնան Լպակի նմուշներ ամբողջ աշխարհի մեջ:

Տեսանք հերոսներ փառաբանող արձաններ, հուշարձաններ՝ նահատակներու հիշատակը հավերժացնող: Անգերազանցելի կմընան Ս. Էջմիածնի Մայր տաճարն ու «Հայկաշեն» վեհանիստ ամառանոցը, որ դրախտավայրի մը տպավորությունը թողուց մեր վրա:

Եվ այս բոլորը մենք վայելեցինք շնորհիվ Ձերդ Սրբության հայրական հրավերին և ուշադրության Մելգոնյանցիներուն հանդեպ:

Վեհափառ Տեր, մեր խումբի, Մելգոնյան կրթական հաստատության ողջ ուսանողության, տնօրենության և հոգաբարձության անունով, շնորհակալություն կհայտնենք Ձեզի՝ մաղթելով երկար կյանք, առողջություն և արդյունավետ երջանիկ գահակալություն»:

Հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, Մելգոնյան վարժարանի ուսանողների խումբն այնուհետև ուղղվեց դեպի Մայր տաճար՝ ներկա լինելու սուրբ պատարագի սրաբողությանը: Պատարագի ընթացքում և՛ տնօրենությունը, և՛ ուսուցչական կազմը, և՛ ուսանողները հաղորդվեցին:

Պատարագիչ հայր սուրբը, որ Մելգոնյան հաստատության նախկին շրջանավարտ սաներից էր և ինքն էլ վայելել էր այդ հաստատության հոգատարությունն ու դաստիարակությունը, իր քարոզի բնաբան ընտրեց Մելգոնյան վարժարանի քայլերգի հետևյալ խոսքերը.

«Անմահ լուսո, ճշմարտության, բարիին
Տաճարն է այս սրբանվեր մեր թանկագին,
Այն մեզ տվավ նահատակված մեր ցեղի
Ձավակներեն լավագույնը ու բարին»:

Իր քարոզի մեջ պատարագիչ հայր սուրբը վեր հանեց սփյուռքահայ կրթական կյանքում Մելգոնյան հաստատության կատարած նշանակալից դերը՝ երախտագիտանքի խոսք ուղղելով այդ հաստատության հին ու նոր բոլոր վաստակավոր ուսուցիչներին և բարերարներին:

Վերջում հոգեհանգստյան մասնավոր կարգ կատարվեց Մելգոնյան վարժարանի բարերարներ Գրիգոր և Կարապետ Մելգոնյան եղբայրների հոգիների խաղաղության համար:

Մելգոնյանցի ուսանողները մայր հայրենիքից և Ս. Էջմիածնից մեկնեցին հուզված, բայց նաև զորացած՝ տարիների իրենց ուխտը կատարած լինելու գոհունակությամբ:

ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՉԱՔԱՀՅԱՆ